

*Արտատպված է՝ Բ. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող»
հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:*

ՈՒՇ ԺԱՄ

Ահ, որքան վաղուց ես չեմ եղել այնտեղ, ասացի ինքս ինձ: Տասնինը տարեկանից: Ապրում էի մի ժամանակ Ռուսաստանում, զգում էի նրան իմը, լիակատար ազատություն ունեի շրջելու որտեղ ասես, ու դժվար էլ չէր եղած-չեղած մի երեք հարյուր վերստ ճամփա կտրել: Բայց շարունակ չէի մեկնում, շարունակ հետաձգում էի: Ու անցնում էին, անցնում այդպես տարիներ, տասնամյակներ: Բայց ահա այլևս չի կարելի հետաձգել. կամ հիմա, կամ երբեք: Պետք է օգտվել միակ և վերջին առիթից, լավ է որ ուշ ժամ է, ու ոչ ոքի չեմ հանդիպի:

Եվ ես կամուրջով անցա գետը, հեռու տեսնելով շուրջն ամեն ինչ՝ հուլիսյան գիշերվա լուսնի լույսով:

Կամուրջն այնքան ծանոթ էր, նախկինը, թվում էր, դեռ երեկ էի տեսել: Կոպիտ-հին, սապատավոր և ասես նույնիսկ ոչ թե քարե, այլ մի տեսակ ժամանակից քարացած՝ հավերժական անխորտակելիության աստիճանի. գիմնազիստ եղած ժամանակս մտածում էի, որ այն եղել է դեռ Բաթուի ժամանակներից: Սակայն քաղաքի հնադարյան լինելը վկայում են միայն զառիթափին տաճարի ստորոտում մնացած քաղաքի պատերի որոշ հետքերը և մեկ էլ այս կամուրջը: Մնացած ամեն ինչը հին է պարզապես, գավառական, ոչ ավելին: Մի բան էր միայն տարօրինակ, մի բան էր այնուամենայնիվ

ցույց տալիս, որ փոփոխություն եղել է աշխարհում այն ժամանակից ի վեր, ինչ ես փոքր տղա էի, պատանի. առաջ գետը նավարկելի չէր, իսկ հիմա, երևում է, խորացրել էին, մաքրել. լուսինը ձախ կողմիցս էր, հեռու գետի գլխին և նրա երեքուն լույսի ու ջրի դողդոջուն, առկայծող փայլի մեջ սպիտակին էր տալիս անվավոր շոգենավը, որ թվում էր դատարկ, այնքան որ լոին էր, թեև բոլոր լուսանցույցները լուսավորված էին, նման անշարժ ոսկե աչքերի և բոլորն արտացոլվում էին ջրի մեջ բազմակոհակ ոսկյա սյունիկների նման. շոգենավն ասես հենց նրանց վրա էլ կանգնած լիներ: Դա Յարոսլավլում էր, և Սուեզի ջրանցքում, և Նեղոսի վրա: Փարիզում գիշերները խոնավ են, մութ, մշուշոտ արշալույսը վարդագույնին է տալիս անթափանցիկ երկնքում, Մենան կամրջի տակ հոսում է սև ձյութի նման, բայց դրանց տակ նույնպես կախվում են կամուրջների լապտերներից արտացոլվող լույսի բազմակոհակ սյունիկները, միայն թե երեք գույնի՝ սպիտակ, կապույտ և կարմիր. ռուսական ազգային դրոշներ: Այստեղ կամուրջին լապտերներ չկան, ու կամուրջն էլ չոր է, փոշոտ: Իսկ առջևում, բլրի վրա, իր այգիներով սևին է տալիս քաղաքը, այգիների գլխին ցցված է հրդեհադիտանոցը: Տե՛ր աստված, դա ինչ անասելի երջանկություն էր: Հրդեհի ժամանակ էր, որ առաջին անգամ համբուրեցի ձեռքդ ու դու, ի պատասխան, սեղմեցիր իմ ձեռքը. ես երբեք չեմ կարող մոռանալ այդ թաքուն համաձայնությունը: Ամբողջ փողոցը սևին էր տալիս մարդկանց բազմությունից այդ չարագուշակ, արտասովոր լուսավորության մեջ: Ես հյուր էի ձեզ մոտ, երբ հանկարծ ահագանգ հնչեցրին, և բոլորը նետվեցին դեպի պատուհանները, իսկ հետո դեպի դռնակը: Վառվում էր հեռվում, գետի մյուս կողմում, բայց շատ թեժ, անհագ, արագ: Սև, կապտավուն վտառի նման այնտեղից դուրս էին գալիս ծխի թանձր քուլաները, նրանցից բարձր պոկվում էին բոցի վառ կարմիր պաստառներն մեզնից մոտ դողդոջ, պղնձափայլ արտացոլվում եկեղեցու գմբեթին: Այդ խոնավածության, այդ ամբոխի մեջ, ամեն կողմից այստեղ վազ տված հասարակ ժողովրդի տազնապած՝ մերթ խղճալի, մերթ ուրախ ձայների մեջ, ես զգում էի քո

աղջկական մազերի, պարանոցի, քաթանե զգեստի բուրմունքը, – և մեկ համարձակություն առա ու, հուզմունքից մարելով, բռնեցի ձեռքը...

Կամուրջն անցնելով բարձրացա բլրակն ու քայլեցի դեպի քաղաք սալարկած ճանապարհով:

Քաղաքում ոչ մի տեղ չկար ոչ մի լույս, ոչ մի կենդանի արարած: Ամեն ինչ համր էր ու լայնարձակ, խաղաղ ու թախծալի՝ ռուսական տափաստանային գիշերվա, տափաստանային քնած քաղաքի թախիծով: Միայն այգիներն էին հագիվ լսելի, զգուշավոր խշխշացնում իրենց տերևները հուլիսյան թույլ ու մեղմ քամուց, որ գալիս էր հեռու դաշտերից, քնքշորեն փչում վրաս: Ես քայլում էի, մեծ լուսինը նույնպես քայլում էր իր հայելե շրջանակով գլորվելով ու երևալով ճյուղերի սևության միջից. լայն փողոցները ստվերի մեջ էին, լուսավորված էին միայն դեպի աջ ընկած տների սպիտակ պատերը և սգո փայլով փայլփլում էին ապակիները. իսկ ես քայլում էի ստվերի տակով, անցնում բծավոր մայթով, որ ասես ծածկված լինեի սև մետաքսե ժանյակներով: Նրա հագին այդպիսի երեկոյան զգեստ էր, շատ շքեղ, երկար և ուղիղ: Այն զարմանալի սագում էր նրա նուրբ իրանին և սև ջահել աչքերին: Նա անիմանալի, խորհրդավոր էր այդ զգեստի մեջ ու վիրավորական ձևով ուշադրություն չէր դարձնում ինձ վրա: Որտե՞ղ էր այդ: Ո՞ւմ մոտ էինք հյուր:

Նպատակս այն էր, որ լինեմ Ստաբայա փողոցում: Ես այնտեղ կարող էի գնալ ուրիշ, ավելի մոտ ճանապարհով: Բայց այգիների մեջ ընկած այս լայն փողոցները դուրս եկա այն պատճառով, որ տեսնեմ գիմնազիան: Ու հասնելով մինչև այնտեղ, նորից զարմացած մնացի, այստեղ էլ ամեն բան նույնն էր, ինչ կես դար առաջ: Քարե պարիսպ, քարե բակ, մեծ քարե շինություն բակում՝ նորից ամեն ինչ նույնքան անհետաքրքիր, տաղտկալի, ինչպես որ էր անցած-գնացած իմ ժամանակ: Մի քիչ հապաղեցի դարպասի մոտ, ուզում էի մեջս հիշողությունների տխրություն, ցավ արթնացնել, բայց չէի կարողանում, այո, այս դարպասից ներս եմ մտել սկզբում ինչպես իրարից չտարբերվող առաջին դասարանցի՝ նոր կապույտ համազգեստային գլխարկով, հովարի վերնում արծաթե արմավենու ճյուղիկների նշանով կարծաթե

կոճակներով նոր փոքրիկ շինել հագած, հետո արդեն նիհար պատանի՝ մոխրագույն բաճկոնով և նրբերիզներով շքեղ շավարով: Բայց մի՞թե այդ ես եմ:

Ստաբայա փողոցը միայն ինձ թվաց մի քիչ ավելի նեղ, քան առաջ էր: Մնացած ամեն ինչն անփոփոխ էր: Խորդուբորդ սալահատակ, ոչ մի ծառ, երկու կողմերից փոշոտ վաճառականական տներ, մայթերը նույնպես խորդուբորդ են, այնքան, որ ավելի լավ է քայլել փողոցի մեջտեղով լիալուսնի լույսի տակ... Եվ գիշերն օգոստոսի վերջին էր, երբ ամբողջ քաղաքը խնձորի բուրմունքով էր լցված, որ սարերի պես կիտված էին շուկաներում, և այնքան տաք էր, որ կովկասյան գոտիով կապված, մի շեղօձիք բլուզ միայն հագիղ քայլելը հաճույք էր իսկական... Կարելի՞ կլինի արդյոք հիշել այդ գիշերը այնտեղ, ինչ-որ մի տեղ, իբր երկնքում:

Համենայն դեպս, վճռեցի քայլել մինչև ձեր տուն: Այն էլ, հավանաբար, չի փոխվել, և ուրեմն, ավելի սարսափելի կլինի տեսնել: Ինչ-որ նոր, օտար մարդիկ են ապրում այնտեղ հիմա: Քո քույրը, քո մայրը, քո եղբայրը, բոլորը քեզնից, որ ամենաջահեղն էիր, երկար ապրեցին, բայց նրանք էլ իրենց ժամին մահացան: Եվ իմ հարազատներն էլ բոլորը մահացել են, և ոչ միայն հարազատներս, այլև շատ ու շատ մտերիմներս, որոնց հետ բարեկամությամբ կամ ընկերությամբ սկսել էի կյանքս. վաղո՞ւց էր արդյոք, նրանք էլ սկսեցին, վստահ, թե վերջ չի լինելու այդ կյանքին, մինչդեռ ամեն ինչ սկսվեց, ընթացավ ու ավարտվեց իմ աչքի առաջ՝ այդքան արագ ու իմ աչքի առաջ: Ու նստեցի մի թմբիկի, ինչ-որ վաճառականի տան մոտ, անառիկ իր փականքներով և դարպասով, ու սկսեցի մտածել, թե ինչպիսին էր նա այն հեռավոր, իմ և նրա ժամանակներում. պարզ ու հավաք սանրվածքի մուգ մազեր, պայծառ հայացք, թեթևակի թխացած ջահել դեմք, թեթև ամառային

զգեստ, որի տակ զգացվում էր անարատ, պիրկ ու անկաշկանդ ջահել մարմինը... Դա մեր սիրո սկիզբն էր, դեռ ոչնչով չմթագնած երջանկության շրջանը, մոտիկության, վստահության, բերկրալի քնքշության, ուրախության շրջանը...

Կա բոլորովին առանձնահատուկ մի բան ռուսական

գավառային քաղաքների ամռան վերջի լույս գիշերներում: Ինչպիսի՜ անդորր, ի՜նչ բարօրություն: Թափառում է գիշերային ուրախ քաղաքում ծերուկը փայտե թակը ձեռքին, բայց հենց այնպես, իր հաճույքի համար, պահպանելու բան չկա, քնեք հանգիստ, բարի մարդիկ, աստծու բարեհաճությունն է ձեզ պահպանում, այս բարձր պայծառ երկինքը, որին անհող նայում է ծերուկը՝ թավառելով օրվա ընթացքում տաքացած սալահատակին և երբեմն-երբեմն միայն, զվարճանալու համար, թակն այս ու այն կողմ թխթխկացնելով: Եվ ահա այսպիսի գիշեր, այն ուշ ժամին, երբ քաղաքում քնած չէր այդ ծերուկը միայն, դու սպասում էիր ձեր՝ աշնան դեմ արդեն չորացած այգում, ու ես թաքուն մտա ձեր այգի: Կամացուկ բացեցի դռնակը, որ դու նախօրոք բաց էիր թողել, կամացուկ և արագ վազ տալով անցա բակը, և բակի խորքի մառանի ետևն անցնելով, մտա այգու խայտաբղետ կիսամութը, ուր հեռվում, խնձորենիների տակի նստարանին թույլ սպիտակին էր տալիս քո զգեստը, և, արագ մոտենալով, ուրախ վախով տեսա քո սպասող աչքերի փայլը:

Ու մենք նստել էինք, նստել երջանկությունից շվարած: Մի ձեռքով գրկում էի քեզ, լսում սրտիդ բաբախյունը, իսկ մյուսով պահել էի ձեռքդ ու ձեռքիդ միջով զգում էի քեզ ամբողջությամբ: Եվ արդեն այնքան ուշ էր, որ նույնիսկ թակի ձայնը ոչ մի տեղ չէր լսվում. մի տեղ նստարանին պառկել ծխամորժը բերնին քուն էր մտել ծերուկը լուսնի լույսով տաքացած: Երբ նայում էի աջ՝ տեսնում էի ինչքան բարձր ու անմեղ փայլում է լուսինը բակի գլխին ու ձկնափայլ փայլվիլում է տան տանիքը: Երբ նայում էի ձախ՝ տեսնում էի չոր խոտով ծածկված կածանը, որ գնալով կորչում էր մյուս խնձորենիների տակ, իսկ խնձորենիների արանքից, ինչ-որ ուրիշ մի այգու միջից միայնակ կանաչ աստղը, որ փայլում էր սառն ու միաժամանակ սպասողական, որ անձայն ինչ-որ բան էր ասում: Մակայն և՛ բակը, և՛ աստղը տեսնում էի միայն անցողակի, մի բան կար միայն աշխարհում՝ մեղմ կիսամութը և քո աչքերի շողարձակ փայլն այդ կիսամութում:

Իսկ հետո դու ինձ ուղեկցեցիր մինչև դռնակ, ու ես ասացի.

— Եթե կա ուրիշ կյանք ու մենք պիտի հանդիպենք այնտեղ, ես ծնկի կիջնեմ քո առաջ ու կհամբուրեմ քո ոտքերն այն ամենի համար, ինչ դու տվեցիր ինձ այս կյանքում:

Դուրս եկա լույս փողոցի մեջտեղն ու քայլեցի դեպի իջևանատուն:

Հիմա էլ թմբից վեր կենալով, ետ գնացի նույն ճամփով, ինչ եկել էի: Ոչ, Մտարայա փողոցից բացի ես ուրիշ նպատակ էլ ունեի, որ սարսափում էի խոստովանել ինքս ինձ, սակայն որը, գիտեի, պետք է կատարել անխուսափելիորեն: Ու ես գնացի, որ տեսնեմ ու հեռանամ՝ արդեն ընդմիջտ:

Ճանապարհը դարձյալ ծանոթ էր: Շարունակ ուղիղ, դեպի ձախ, հետո անցնում ես շուկայով, շուկայից հետո՝ Մոնաստիրական փողոցով, ու դուրս ես գալիս քաղաքից:

Շուկան կարծես ուրիշ քաղաք լիներ քաղաքի մեջ: Ուժեղ հոտեր վաճառաշարքերից: Օբժորնի շարքում, ծածկի տակ գտնվող երկար սեղաններով ու նստարաններով, մութ էր: Սկոբյանոյ շարքում անցումի մեջտեղում շղթայով կախված էր մեծաչքանի Մպասի սրբապատկերը ժանգոտած շրջանակի մեջ: Մուչնոյ շարքում առավոտները միշտ թռչկոտում, սալահատակին

կտցում էին աղավնիները ամբողջ երամներով: Գնում ես գիմնագիա՝ ինչքան շատ էին դրանք: Եվ բոլորը չաղիկ, գույնզգույն թթուցներով. կտցում են ու փախչում կանացիավարի, կոտրատվելով, ճոճվելով, գլուխները շարունակ ցնցելով, ասես քեզ չեն էլ նկատում. վեր են թռչում թևերը թափահարելով միայն այն ժամանակ, երբ քիչ է մնում ոտքիդ տակ տաս մեկնումեկին: Իսկ գիշերն այստեղ արագ ու անհանգիստ վազվզում են մեծ սև առնետներ, նողկալի և սարսափելի:

Մոնաստիրական փողոցն ընկած է դաշտի ու ճանապարհի միջև. մեկը քաղաքից տուն է բերում՝ գյուղ, իսկ մյուսը՝ տանում է մեռյալների քաղաք: Փարիզում երկու օր այսինչ համարի տունն այնինչ փողոցի վրա մուտքին բուսաֆորային նշան է ունենում՝ սգագույն և արծաթագույն շրջանակված, երկու օր մուտքում սգաձածկոցով սեղանին դրված է լինում սգաշրջանակով մի թերթ թուղթ, որի վրա ստորագրում են իրենց կարեկցանքն արտահայտելով

բարեկիրթ այցելուները. հետո, որոշակի վերջին ժամկետին մուտքի մոտ կանգ է առնում հսկայական, սգո շքեղ ծածկոցով կառքը՝ դիակառքը, սեփ-սև փայտից, ինչպես ժանտախտադագաղ, ծածկոցի կլորավուն փեշերը երկնային կյանքն են խորհրդանշում խոշոր սպիտակ աստղերով, իսկ տանիքի անկյունները զարդարված են սև գանգուր փետրափնջերով՝ դժոխքի ջայլամների փետուրներով. դիակառքին լծված են հսկա հրեշավոր ձիեր սեփ-սև եղջյուրավոր սթարով, վրան սպիտակ շրջանակներ աչքերի համար. անսահմանորեն բարձր նստիքին նստած սպասում է դուրս բերելուն ծեր հարբեցողը, նույնպես խորհրդանշորեն հագած թաղման համազգեստ և նույնպիսի եռանկյունի գլխարկ, ու ներքուստ թերևս ամեն անգամ քնծիծաղելով այդ հանդիսավոր բառերի վրա. «Requiem aeternam dona eis, Domine, et lux perpetua luceat eis»¹: Իսկ այստեղ ամեն բան այլ է: Փչում է քամին Մոնաստիրական փողոցից, ու քամու դեմ տանում են բաց դագաղը, երբեքում է բրնձագույն դեմքը՝ ճակատին, փակ ուռուցիկ կոպերի վրա ընկած մագափնջով: Այդպես տարել են և նրան:

Քաղաքից դուրս գալուց, խճուղուց դեպի ձախ մի վանք կա դեռ Ալեքսեյ Միխայլովիչ ցարի ժամանակից, ամրոցի միջտ փակ դարպաս և ամրոցի պարիսպ, որի ետևից փայլում են տաճարի ոսկեգոծ շաղգամները: Հետո, արդեն լրիվ դաշտի մեջ, ընդարձակ քառակուսի են շրջանակում այլ պատեր, արդեն ոչ բարձր. դրա ներսում ամբողջ մի անտառ է իրա խաչաձևող երկար պողոտաներով, որոնց երկու կողմերում. հին կնձենիների, լոբենիների և կեչիների տակ փռված են տեսակ-տեսակ խաչեր և հուշարձաններ: Այստեղ դարպասը բաց էր կրնկի վրա, ու ես տեսա գլխավոր պողոտան, ուղիղ, անվերջանալի: Վեհերոտ հանեցի գլխարկս ու ներս մտա: Որքան ուշ է և ի՞նչ համբույրուն: Լուսինը ծառերի գլխին արդեն ցած էր կախված, բայց շուրջն ամեն ինչ, ինչքան աչքդ կտրում էր, դեռ երևում էր պարզ: Այս մեռյալների անտառի ամբողջ տարածությունը՝ իր խաչերով ու հուշարձաններով երևում էր նախշավոր թափանցիկ ստվերում: Լուսաբացին մոտ քամին դադարել էր՝ ծառերի տակ երևացող բաց և մուգ կետերը ննջում էին: Անտառի հեռվից, գերեզմանոցի եկեղեցու ետևից հանկարծ մի բան երևաց ու կատաղի արագությամբ, մութ ամպի նման եկավ վրաս, ես, ինձ կորցրած, մի կողմ քաշվեցի, գլուխս միանգամից սառեց ու սեղմվեց, սիրտս տեղից պոկվեց ու մարեց. . . Ի՞նչ էր այդ: Անցավ ու ծածկվեց: Մակայն սիրտս կրծքիս մեջ այդպես էլ մնաց կանգնած: Եվ այդպես, կանգնած սրտով, ծանր քարի նման այն մեջս կրելով, շարունակեցի առաջանալ: Գիտեի, թե ուր պետք է գնամ, քայլում էի ուղիղ պողոտայով՝ նրա ամենաձայրին, պարսպի հետին պատից մի քանի քայլի վրա կանգ առա, իմ առջև, հարթ տեղում, չոր տերևների մեջ միայնակ դրված էր երկարուկ ու բավական նեղիկ մի քար, գլխավերևի մասով

¹ Պարզևիր նրանց հավերժական խաղաղություն, տեր, ու թող լուսավորի նրանց լույսը հավերժական (*լատ.*):

դեպի պատը: Իսկ պատի ետևից հրաշք փայլաքարի նման երևում էր ցած կանաչ աստղը,
շողարձակ, ինչպես այն, առաջվանը, բայց համր, անշարժ:

19 հոկտեմբերի 1930